ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՐՔ-ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Դեռևս X դարից հայ գրական կյանքում սկիզբ առած վերելքը նշանավորվեց նաև նախորդ դարերից ժառանգված գրական վաղեմի և կենսունակ տեսակների, այդ թվում և վարքագրության բարգավաճումով ու զարգացումով։

Մինչև այժմ քիչ ուսումնասիրված XI—XV դդ. վարքագրական հուշարձանները՝ այդ միջնադարյան կենսագրությունները, աչքի են ընկնում իրենց հարուստ բովանդակությամբ, արվեստի առանձնահատկություններով և ժանրային ինքնահատուկ գծերով։ Հիշյալ շրջանում զարգացում են ապրում հայ վարքագրության մեջ հենց սկզբից գոյություն ունեցող երկու ուղղություններն էլ՝ հռետորականը[1] և ժողովրդականը։

Հուշարձանի նպատակադրումն էլ հիմնականում պայմանավորում էր նրանց բնույթը։ Այս կամ այն ուղղության վարքերի գերիշխումը տարբեր ժամանակաշրջաններում մեծ չափով կախված էր նաև գրականության զարգացման աստիճանից, տիրող գրական ճաշակից ու պահանջներից։ Հիրավի, հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող մշակութային վերելքի ժամանակաշրջանում՝ XII—XIV դդ., վարքագրության մեջ նկատվում է հռետորական ուղղության գերիշխում, որը, սակայն, XIV—XV դդ. հետզհետե իր տեղը զիջում է ժողովրդականին։ Վերջինիս ընդգրկումը հռետորական վարքերի համեմատությամբ շատ ավելի լայն է։ Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ այս խմբի վարքերի մեջ իրենց հերթին պետք է տարբերակել երեք ենթախումբ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել պարզ-պատմողական, հիշատակարանային և հայսմավուրքային։

Իրենց տարբերակիչ գծերով հանդերձ, այդ բոլոր տեսակները աչքի են ընկնում մի ընդհանրությամբ, որը և թույլ է տալիս նրանց միավորել մի խմբի մեջ։ Այդ ընդհանուր գիծը պարզ ոճն է, հռետորական հնարանքների նվազ օգտագործումը և, ընդհակառակը, ժողովրդի բանավոր ստեղծագործության տարրերի առատությունը։

Նախապես ասենք, որ այդպիսի դասակարգումը որոշ չափով պայմանական է, քանի որ հիշատակարանային վարքերի ու վկայաբանությունների շարքում հանդիպում են հուշարձաններ՝ գրված հռետորական, զարդարուն ոճով։ Նույն բանը մենք տեսնում ենք հայսմավուրքների խմբագրություններում։ Հետևաբար խոսքն այս կամ այն տեսակի հուշարձանների մեծ մասին բնորոշ առանձնահատկություններին է վերաբերում։

Այս հոդվածում մենք կանդրադառնանք ժողովրդական ուղղությանը պատկանող վարքերի միայն մի տեսակին՝ հիշատակարանային վարքերին կամ վարք-հիշատակարաններին։

---

[1] Հռետորական վարքերի մասին տե՛ս Ք. Տեր-Դավթյան, Հայկական վարքերի գեղարվեստական արժեքը (XI—XV դդ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1975, № 1։

Հիշատակարանները, առաջ գալով հայ գրականության սկզբնավորման դարաշրջանում և XI—XII դդ. գրական վերելքի ու գրչական գործի զարգացման շնորհիվ որպես գրական տեսակ վերջնականապես ձևավորվելով՝ հետզհետե զգալի զարգացում և տարածում են ստանում։ Նրանց մեջ մի առանձին խումբ են կազմում վարք-հիշատակարանները, գրված տարբեր առիթներով։ Այդպիսիք են Մաշտոց Եղվարդեցու (հեղինակ՝ Ստեփանոս, IX դար)[2], Գրիգոր Նարեկացու (հեղինակ՝ Ներսես Լամբրոնացի, XII դար)[3], Ներսես Լամբրոնացու (հեղինակ՝ Սամվել Սկևռացի, XII դար)[4], Մխիթար Սասնեցու (հեղինակ՝ Մկրտիչ, XIII դար)[5], Գրիգոր Տաթևացու (հեղինակ՝ Մատթեոս Ջուղայեցի, XV դար)[6], Մկրտիչ Նաղաշի (հեղինակ՝ Աստվածատուր, XV դար)[7] վարքերը և այլն։

Հիշատակարանային վարքերը տարբերվում են մյուս բոլոր վարքերից մի շարք ինքնահատուկ գծերով՝ իրենց նպատակադրումով, կառուցվածքով, հերոսի կերպավորման սկզբունքով, հեղինակի կերպարի առկայությամբ, գեղարվեստական արտահայտչամիջոցներով, լեզվական ատաղձով, իրականության արտացոլման եղանակով և այլն։ Հատկանշական է, որ հեղինակը, որպես կանոն, իր հերոսի ժամանակակիցն է և նրան մոտիկից ճանաչող մարդ։ Մասամբ դրանով էլ պայմանավորված են նշված առանձնահատկություններից մի քանիսը։ Բացառությամբ Ներսես Լամբրոնացու, որի գրչին է պատկանում Նարեկացու վարք-հիշատակարանը, վերոհիշյալ բոլոր վարքերի հեղինակները եղել են իրենց հերոսների ժամանակակիցն ու մտերիմը։ Իսկ որոշ վարքեր գրվել են հերոսի կենդանության օրոք (օրինակ՝ Ներսես Լամբրոնացու, Մկրտիչ Նաղաշի վարքերը)։

Վարք-հիշատակարաններում, ինչպես և սովորական հիշատակարաններում[8], գրիչները համարյա միշտ անդրադառնում են վարք գրելու իրենց մտահղացմանը և դրդապատճառներին։ Այսպես, Սամվել Սկևռացին, ընդօրինակելով Ներսես Լամբրոնացու «Սաղմոսի մեկնությունը», վերջում թողել է «զպատմութիւն կենաց սորին ընթացից, զի մի մնասցէ տարակոյս յառաջել ժամանակին սորին քննողի՝ ովն և ուստն և զիարդն, որպէս և մեք այսաւր ունիմք զբազում հարց մերոց և վարդապետաց Հայոց, այսինքն զԴավիթ Սերգինեցի և զՆրիգոր Նարիկեցի և զՄովսէս Խորենացի և զայլս, որոց ի բանից պարարտութենէ զուարճանամք և զիարդն կենաց և վարուց փափագելով գիտել՝ ոչ ունիմք և ոչ մի բան վասն երանելեացն պատմութիւն։ Եւ յաղագս այսր՝ զորայս մինչ ցայս, որ է կենաց իւրոց ժամանակ ԼԸ ամ, ցու-

2 Տե՛ս Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 87—92, 92—96։

3 Տե՛ս «Ներսէսի Լամբրոնացւոյ Վարք Գրիգորի Նարեկացւոյ», հրատ. Հ. Ոսկյան, «Հանդէս ամսօրյա», 1940, էջ 214, 215։

4 Տե՛ս «Հիշատակարանք ձեռագրաց», էջ 542—550։

5 Տե՛ս Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի (Կերմանեցի), Վաղարշապատ, 1899։

6 Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն Ա, Երևան, 1955, էջ 103—104։

7 Նույն տեղում, էջ 622—631։

8 Հիշատակարանների գեղարվեստական առանձնահատկությունների մասին տե՛ս Հ. Գ. Բախչինյան, Ձեռագրերի հիշատակարանների ընդհանուր կառուցվածքն ու բովանդակությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1, էջ 189—196։

ցաք համառաւտ և մաղթեմք Քրիստոսի տալ զսոյն մեզ եւս յերկարութեամբ աւուրց...»[9]: Մի այլ հուշարձանում՝ Մխիթար Սասնեցու վարքում, կան վկայություններ, որոնք պատկերացում են տալիս հիշատակարանային վարքերի ընդհանուր բնույթի և նրանց ստեղծման անհրաժեշտության մասին: Հիշյալ վարքի հեղինակ Մկրտիչը գրում է. «Ամենայն նրբահայեաց պատմութիւնք ասացեալ և շարագրեալ եղեն յաստուածայնոց ոմանց ի սրբոց հարցն և ի վարդապետացն առաջնոց և առընթեր նոցին յիշատակք նոցա մակագրեալ իցեն, թէ յորոց տեղւոջէ և թէ յորպիսում ժամանակի խօսեցեալ և յարմարեալ իցեն աստուածային բանք վարդապետութեան նոցա»[10]: Հետեվելով այդ ավանդույթին, նա գրում է. «Արդ, կարևոր համարեցաք և մեք սակաւ ինչ զերանելի սուրբ հօրս մերոյ Մխիթարայ տիեզերալոյս վարդապետի զսկիզբն և զկատարումն կենաց նորա ընդ գրով արկանել, թէ յորո՞ւմ ժամանակի էր, և առ ո՞ վարժեցաւ և ո՞յք էին ուսումնակիցք սորին և թէ որպե՞ս զժամանակս միջին հասակին եկաց և թե որպիսի՞ քաջութեամբ և արիութեամբ զընթացս իւր կատարեաց»[11]: Ինչպես տեսնում ենք, հիշատակարանների հիմնական նպատակն է եղել ապագա սերունդներին անհրաժեշտ կենսագրական տեղեկություններ թողնել իրենց ընդօրինակած ստեղծագործությունների հեղինակի և նրա երկերի մասին:

Սակայն գրիչները տարբեր ձևով էին իրականացնում այդ նպատակը: Հետևաբար չի կարելի խոսել վարքերի լիակատար նմանության մասին: Երբեմն այդպիսի վարքերը վեր էին ածվում բավական մանրամասն պատմությունների ոչ միայն հերոսի, այլև նրա ամբողջ տոհմի մասին (օրինակ՝ Ներսես Լամբրոնացու վարքը), իսկ երբեմն էլ լինում էին շատ համառոտ՝ կրելով սոսկ այսպես ասած, տեղեկատու բնույթ (Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթևացու վարքերը): Սակայն բոլոր դեպքերում նպատակը նույնն էր: Հիշատակարանային և այլ տիպի վարքերը համեմատելիս ակնառու է դառնում նրանց հորինվածքային տարբերությունը: Հռետորական, ինչպես և պարզ-պատմողական և հայսմավուրքային վարքերը ունեն խրատա-ուսուցողական բնույթ, որն իր վառ արտահայտությունն է գտնում հռետորական վարքերի նախաբաններում. դրանք նախապատրաստում, տրամադրում են ընթերցողին արտասովորի, իդեալականի հետ հանդիպելուն: Այդպիսի նախաբաններում տրվում է «սրբի», կատարյալ մարդու վարքի շարադրման եղանակը: Ծրագրի որոշակի ուրվագիծ է նկատվում նաև վարք-հիշատակարանների վերը բերված հատվածներում: Սակայն վարքի խրատա-ուսուցողական կողմն այստեղ ունի երկրորդական նշանակություն: Ծրագրում, որը փաստորեն արծարծվելիք հարցերի կուռ շրջանակ է ներկայացնում, առաջնակարգ են դառնում կոնկրետ կենսագրական տեղեկությունները, գրչին հուզող իրադարձությունները, հերոսի կյանքից այնպիսի դեպքեր, որոնց անմիջական մասնակիցն է եղել ինքը գրիչը: Վարք-հիշատակարաններում արտահայտված որոշ մտքեր վկայում են այն մասին, որ հեղինակները լավ էին գիտակցում իրենց գրվածքի տարբերությունը զուտ վարքագրական երկից: Այսպես, Աստվածատուրը՝ Մկրտիչ Նաղաշի վարքի հեղինակը, գրում է. «Զի

9 «Հիշատակարանք ձեռագրաց», էջ 549:

10 Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, էջ 27:

11 Նույն տեղում:

աւրէն (է) պատմագրաց յաւելեալ ի Ճառս գովեստից, այլ մեք զնոյն շարագրեցաք, զոր ականատես եղաք և յայտնի է ամենայն երկիր տեսողաց...»[12]։

Իհարկե, միշտ չէ, որ կարելի է վստահել նման խոստովանություններին, որովհետև վարքագիրները սովորաբար ջանում են ընդգծել իրենց գրածի ճշմարտացիությունը, սակայն հիշատակարանային վարքերը այդօրինակ վերապահումների ամենաքիչ տեղիք տվող գրական հուշարձաններն են։

Նման մերձեցումը իրականությանը, կենսագրական պատմության ակնհայտ պարզությունը ռուսական վարքագրական հուշարձաններում Վ. Կլյուչևսկին համարում է «այն բանի հետևանք, որ վարքը իր ծագմամբ և նպատակով հեռացել է եկեղեցական արարողությունից... հիմնականում դրանով է բացատրվում պարզ կենսագրական գրվածքների առաջացումը և տարածումը XV դարում, որոնց հեղինակները, պարտադրված չզգալով իրենց գրելու լիակատար կենսագրություն և չկաշկանդվելով վարքի շրջանակներով, առավել պարզ և անմիջականորեն էին գրի առնում իրենց համար ամենահարազատ և թանկ հիշողությունները»[13]։

Հիշատակարանային վարքերի բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ հեղինակը վարքի գլխավոր գործող անձերից է։ Հռետորական վարքերում նրա գերը հիմնականում սահմանափակվում է նախաբանով, որտեղ հեղինակը՝ վարք գրելու «անասելի» ծանր գործի կապակցությամբ իր ունեցած ապրումների չափազանցված նկարագրությունը ի սպաս է դնում հիմնական խնդրի իրագործմանը՝ հերոսի կյանքի նշանակալիության տպավորություն ստեղծելուն։ Այդ իմաստով հռետորական կամ ներբողական վարքերում հեղինակի դերը կրում է ձևական բնույթ և պայմանավորված է ժանրային պահանջներով։ Պարզ-պատմողական վարքերում այն նույնպես ձևական է, հեղինակի՝ առաջին դեմքով շարադրելը հաճախ սոսկ որևէ հրաշագործության հավաստիությունը ապացուցելու եղանակ է։ Թե՛ հռետորական, թե՛ պարզ-պատմողական վարքերում հեղինակի դերը հիմնականում հերոսի դրվատման, նրան առօրեականից վեր բարձրացնելու մեջ է։ Բոլորովին այլ բան է նկատվում հիշատակարանային վարքերում։ Հեղինակի՝ գործող անձի դերում հանդես գալը իջեցնում է վարքը հասարակ կենսագրության աստիճանի, ուր երբեմն հերոսի կյանքի որոշ դրվագներ նկարագրվում են ամենայն մանրամասնությամբ։ Այդ առանձնահատկությունը ցայտուն արտահայտություն է գտել հատկապես Ներսես Լամբրոնացու վարքում։ Շարադրանքի ողջ ընթացքում ընթերցողը զգում է հեղինակի ներկայությունը, նրա մասնակցությունը հերոսի կյանքի շատ իրադարձություններին։ Սամվել Սկևռացին ներկա է պատարագին, որ կատարում է Ներսես Լամբրոնացին Հեթումի կողմից կառուցվող տաճարի շինարարության ավարտի կապակցությամբ («որոյ հաղորդեալ տեսութեամբ և ճաշակմամբ ուրախութեամբ մեծաւ տուաք փառս Քրիստոսի»), ականատեսն է Ներսեսի վշտի, որը «տրտմեցաւ յոյժ», տեսնելով «Պատարագի մեկնության» հափշտակվելը ավազակների կողմից։ Հենց անձամբ Ներսեսի խնդրանքով, որին ցնցել էր «Պատարագի մեկնության» միակ օրինակի ցավալի կորուստը, Սամվելը հանձն է առնում շարունակել

12 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 625։

13 В. Ключевский, Древнерусские жития как исторический источник, М., 1871, էջ 368։

«Սաղմոսի մեկնության» ձեռագրի ընդօրինակությունը, որը սկսել էր Գեորգը։ Բերենք Սամվել Սկևռացու գրած վարքի համապատասխան հատվածը. «Իսկ ի սոյն աւուրքս առաւ ըստ մեղաց մերոց սուրբ քաղաքն Երուսաղէմ յայլասեռից, և ինքնակալն Հռոմա, որ Ալամնաց թագաւոր, լսէաք թէ յառաջէ յարեալս՝ ի փրկութիւն սուրբ տեղեացն, խորհուրդ էառ մեծ իշխողս Լեւոն կհայրս մեր սուրբ առաքել ընդ առաջ նորին հրեշտակութեամբ և վասն այսր մտածութեան գնայր առ սուրբ հայրապետն Գրիգորիոս ունել զնորին հրամանսն և զկամսն ընդ իւր։ Եւ ի նոյն ճանապարհն խորանաբնակ ազգն Ըսմայելի յարձակեցան ի վերա և զճանապարհակից եղբայրս և զկրաւնաւորս սրով հարակեցին՝ առընթեր քաղաքին Մարաշայ, և զբեռնակիր գրաստսն յափշտակեցին, մնացեալ խնամովքն Աստուծոյ միայն սա և եպիսկոպոսակից հարազատ իւր Յովհաննէս և վարժապետն Գէորգ։ Եվ զի ուներ ընդ իւր զայս[14] կիրս սրբոյ պատարագին քննութեան և եկեղեցական կարգաց յինքենէ ասացեալ շնորհիւ սուրբ հոգոյն, յափշտակեցաւ յաւազակացն, և [ի] չմնալ հաւասարն, տրտմեցաւ յոյժ։ Եւ ի դառնալն առ մեզ վերստին զգուշացեալ, զի մի՛ և այս Մեկնութիւն Սաղմոսիս յիրիք շփոթմանէ, որ իւրն է գիր, պակասեսցէ և հաւասարն ոչ մնասցէ, յորդորեաց զկրաւնակից զեղբայր մեր զԳէորգ սկսանել և գրել։ Եւ նա յաւժարութեամբ յանձն առ, պատրաստեաց զնիւթն և սկիզբն արար։ Իսկ ապա փութացուցեալ իշխանական հրամանն զճանապարհն, որ առ ինքնակալն Հռոմա թագաւորն Ալամնաց ճանապարհակից էառ իւր զԳէորգ, և ինձ՝ Սամուէլի նուաստի հրաման ետ զսկսեալն ի նմանէ աւարտել, որ յաւժարութեամբ յանձն առի և պինդ հաւատով ի փառս Աստուծոյ կատարեցի՝ ի թուիս ՌԼԹ։ Այս ամք Գ են կործանման սուրբ տեղեաց Երուսաղեմի։ Եւ յիշանել հարս մեր ի Տարսոն առ ի նաւարկել ի ճանապարհն, որ առաջի կայր, եհաս ինքնակալն յԻկոնիոն, և յետ Փոքր ինչ աւուրց զաւրք Նորին՝ ի Տարսոն, և մնաց սոցին յառաջելն։ Իսկ իմ ի դրելոյ զմատեանս ոչ թուլացեալ...»[15]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ Ներսեսի վարքի պատմությունը մերթ ընդ մերթ ընդմիջարկվում է Սամվելին վերաբերող տեղեկություններով, հեղինակի դերը հատկապես մեծանում է վարքի վերջում, որտեղ խոսվում է նրա անմիջական աշխատանքի՝ ձեռագրի ընդօրինակման մասին։ Այստեղ արդեն Սամվելի խոսքը, կաշկանդված չլինելով վարքագրական կանոններով, դառնում է շատ ավելի անկեղծ ու հուզական։ Դարերի խորքից հառնում է գրիչի կենդանի կերպարը, որն իր ամբողջ կյանքը նվիրել է ձեռագրեր ընդօրինակելու բազմաչարչար գործին, քանի որ նրա հոգին «լուսավորված էր» այն գիտակցությամբ, որ ապագա սերունդների համար կատարում է «աստվածային իմաստությամբ» նրանց բաժակները լցնող մատռվակի դեր։

Վարք-հիշատակարաններում նկատվում է հիշատակարաններին և վարքերին բնորոշ կառուցվածքի միահյուսում, որն արտահայտվում է նաև շարադրման եղանակի մեջ՝ վարքագրական շարադրանքը հաճախ վերաճում է վավերա-փաստագրականի։ Ժանրային յուրահատկությունների նմանօրինակ

---

14 Գ. Հովսեփյանի մոտ «զայլ» է, ուղղում ենք ըստ Ղ. Ալիշանի («Հայապատում», Վենետիկ, 1901, էջ 417)։

15 «Հիշատակարանք ձեռագրաց», էջ 548—549։

համատեղման ցայտուն նմուշ է Մկրտիչ Նաղաշի վարքը, որն իր ծավալով չի զիջում ընդարձակ վարքերին։ Մյուս հիշատակարանների նման Մկրտիչ Նաղաշի վարքին ևս հատուկ է պատմական աղբյուրի վավերականությունը։ Որպես գրական հուշարձան այն բացահայտում է հիշատակարանային վարքերի ժանրային յուրահատկությունը և որոշ չափով նաև այն զարգացումը, որ ժամանակի ընթացքում կրել են նրանք։ Այստեղ վարքագրական ավանդական շարադրանքը միահյուսված է իրական կյանքի տարբեր կողմերի նկարագրմանը։ Վարքի առաջին մասը, որը վերաբերում է Մկրտչի կյանքի սկզբնական շրջանին Պոռ գյուղում[16] և որը Աստվածատուրը շարադրել է ժամանակակիցների հիշողությունների և Մկրտչի պատմածների հիման վրա, հիմնականում գրված է վարքագրական ավանդական եղանակով։ Այն սկսվում է վարքերին հատուկ նախաբանով՝ աստծու փառաբանությամբ, որը մարդկանց միջից ընտրում է առավել արժանիներին. «Ի վախճան ժամանակի և ի կէտ սուզական, որ ամենայն ծաղիկ թառամեալ էր և ամենայն տերև ցամաքեալ, յայտնեաց մեզ աստուած ծաղիկ անթառամ... զտէր Մկրտիչն»[17] և այլն։ Այս ավանդական սկսվածքին հաջորդում են վարքագրական եղանակով Մկրտիչ Նաղաշի կյանքի սկզբնական շրջանի նկարագրությունը, տեղեկություններ նրա ծնողների՝ «մեծատուն և աստուածարեալ» քահանա Առաքելի և «բարեպաշտ» մոր, իր՝ Մկրտչի մասին, որը «ի տղայութենէ սիրէր զվարս կրօնավորական՝ սիրէր զկրաւնաւորս և զվանականս»։ Մյուս «սրբերի» նման Մկրտիչը մանուկ հասակից ցուցաբերում է արտակարգ ընդունակություններ և խիստ տարբերվում իր ընկերներից. «Ջուսումն աստուածաշունչ գրոց, զոր ինչ սա ի միում ժամու, այլ ոք զավուրս ժ (10) բազում աշխատութեամբ ոչ կարէին ի միտ առնուլ»[18]։ Անհաղորդ աշխարհիկ կյանքի վայելքներին, նա ծնողների հարկադրանքով ամուսնանում է, չփոխելով, սակայն, «զբարս իւր»։ Շուտով մահանում է նրա կինը, և Մկրտիչը ստանում է այն ազատությունը, «զոր և ինքն զնոյն խնդրէր աստուծոյ»։ Նա «առաջնորդութեամբ աստուած սուրբ հոգոյն ելեալ» թողնում է Պոռ գյուղը և մեկնում Ամիդ։ Վարքագրական այս կայուն ու ավանդական կաղապարը նույն հաջողությամբ կարող է հարմարեցվել այլ «սրբի»։ Ուստի և բնական է, որ Աստվածատուրը ընդհանուր տեղիներով է լրացնում Մկրտչի կենսագրության բաց կետերը. «... և ամենեցուն հիանալի էր ի վեր քան զտեսութիւն մտաց, մինչ գրեթե ոչ ոք երևեցաւ յայնմ ժամանակի այսպիսի տիրական շնորհիւ զարդարեալ՝ առաքելաշնորհ և աստուածուսոյց»[19] և այլն։ Այստեղ ոչինչ չի մատնում ո՛չ ժամանակը, ո՛չ միջավայրը, որում անցնում էր Մկրտիչ Նաղաշի կյանքը կամ գրվում էր նրա վարքը։

Հետագա իր շարադրանքի մեջ հեղինակը աշխատում է հավատարիմ մնալ վարքագրական կանոններին։ Մկրտիչ Նաղաշի կյանքի հենց այս՝ ամիդյան, եկեղեցական-քաղաքական և գրական բուռն գործունեության շրջանն էր, որ առավել հետաքրքրություն պետք է ներկայացներ վարքագրի համար, քանի

16 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 622։

17 Նույն տեղում, էջ 623։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում։

որ այդ ժամանակ է, որ լիովին պետք է բացահայտվեին վարքագրական հերոսի քրիստոնեական առաքինությունները։ Եվ իրոք, Աստվածատուրը մեծ ոգևորությամբ է խոսում Մկրտչի գործերի և արժանիքների մասին՝ «համարեա թէ,— գրում է նա,— զամենայն տեսակ աստուածային շնորհաց, զոր յամենայն մարդիկ՝ ի սա միայն տեսանիւր լի և անթերի՝ ընկերասէր, աւտարասէր, աղքատասէր, խաղաղարար, խոնարհ և համբերող, ողորմած, առատասիրտ, մեծապարգև...»[20]։ Սակայն և՛ ձևի, և՛ բովանդակության տեսակետից վարքը այս մասում հեռանում է տիպիկ վարքագրական հուշարձանից և ի հայտ բերում իր հիշատակարանային յուրահատկությունը։ Ձևական առումով դա առաջին հերթին արտահայտվել է Մկրտչի առաքինությունների և գործերի վավերա-փաստագրական թվարկման մեջ, որը, ի հակադրություն բուն վարքագրական հուշարձանի, կրում է վերին աստիճանի կոնկրետ և մանրակրկիտ բնույթ։ Օրինակ, թվարկելով Նաղաշի արարքները, Աստվածատուրը գրում է. «Հինգերորդ, զի եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ դիմոսական հարկի կային, և եպիսկոպոսք՝ մաքսապետք, զի զամենայն, զոր ինչ առնուին ի քրիստոնէից՝ ի մաքս տային, և ոչ կարէին մեկ հաց տալ աստուծոյ կամ աղքատի, և սա զաւրութեամբն Քրիստոսի, եբարձ զմաքսն յեկեղեցեաց և ինքն ևս առնոյր ի պարոնացն ժ(10) և ի(20) հազարով և բաշխէր եկեղեցեաց, աղքատաց և կարաւտելոց»[21]։ Կամ. «Եթներորդ, զի ոչ ոք իշխէր փիլոնով կամ վեղարով շրջել. և յաւուրս սորա յամենայն ուրեք համարձակ զգենուին և քահանայական կարգաւք շրջէին՝ երևելի փառաւք»[22] և այլն։

Մկրտչի կյանքի ամիդյան շրջանի նկարագրության մեջ, որին լավ ծանոթ և ականատես էր Աստվածատուրը, շռայլորեն ներթափանցում է առևտրական խոշոր կենտրոն հանդիսացող Ամիդի բարքերի և կենցաղի, բուռն հորդացող աշխարհիկ կյանքի նկարագրությունը, որից չէր խորշում նաև հայ եկեղեցու եպիսկոպոսը և առաջնորդը։ Եթե ժողովրդական ուղղության պատկանող մյուս վարքագրական հուշարձաններում կարելի է նշել կենցաղային տարրի սոսկ առկայությունը, ապա հիշատակարանային վարքերում հանդիպում ենք կենցաղի անհամեմատ լիարյուն պատկերների։

Ժամանակի կենցաղի և բարքերի առկայությունը վարքում իր կնիքն է թողնում նաև վարքագրական հերոսի կերպավորման եղանակի վրա։ Վարքագրական հերոսի անհատականացման հաջող օրինակների կարելի է հանդիպել արդեն XI—XV դդ. հռետորական վարքերում։ Այնտեղ վարքադիրը դրան հասնում է գեղարվեստական ներգործության ուժի միջոցով, կերպարը գեղարվեստական տեսակետից համոզիչ դարձնելով (օրինակ՝ Ներսես Շնորհալու կերպարը)։ Հիշատակարանային վարքերում վարքագրական հերոսի անհատականացման միջոցը նրան շրջապատող կենցաղի և բարքերի նկարագրությունն է։ Հիշեցնենք, որ «միայն «ժամանակավորից», «մասնավորից» և «պատահականից» ազատագրված մարդը կարող է դառնալ վարքագրական երկի հերոսը»[23]։ Աստվածատուրը, հակառակ դրան, Մկրտչին ներկայացնում է իրա-

---

20 Նույն տեղում, էջ 625։

21 Նույն տեղում, էջ 626։

22 Նույն տեղում։

23 И. П. Еремин, Литература Древней Руси, М.—Л., 1966, էջ 118։

կան կյանքի պայմաններում։ Իր ժամանակի առաջադեմ և կրթված մարդը, նշանավոր բանաստեղծը, լինելով «ողջ Միջագետքի եպիսկոպոսը», շատ ուժ ու ջանք էր գործադրել Ամիդի և Միջագետքի հայ բնակչության վիճակը բարելավելու և թեթևացնելու համար[24]։ Սակայն որքա՜ն հեռու է նա վարքագրական ավանդական հերոսից։ Մկրտիչը գիտե փողի արժեքը և չի խորշում ո՛չ երկրային պարգևներից, ո՛չ պատվից։ Նա ընդունում է նվիրատվություններ ոչ միայն քրիստոնյաներից, «այլև և Թուրք, և Թաթ, և Թաթար, և Քուրթ, և Արապ, և Ջհուտ, և ամենայն ազինք, ընդ տեսանելն զպատիւ և զպարգևս պատրաստէին՝ ձիս և ջորիս և խլայս մեծագինս անասելի և անպատմելի»[25]։ Բոլոր կողմերից «յԱրևելից և յԱրևմտից» գալիս են նրա մոտ և նվիրատվություններ անում ոսկով, արծաթով, թանկարժեք քարերով, մեծագին կերպասներով։ Երբեմն այդ նվիրատվությունները կազմում են պատկառելի գումար՝ 1000—2000 թանկա։ Մկրտիչը չի խուսափում բարեկամական հարաբերություններ հաստատել մահմեդական տիրակալների հետ, ցուցաբերելով քաղաքական հեռատեսություն և ճկունություն, որոնք ավելի կսազեին դիվանագետին, քան «առաքելական եպիսկոպոսին»։ Հարուստ նվերներ է շնորհում նրան Օթման բեկը, ընդհուպ մինչև թագավորական զգեստներ։ Ճիշտ է, Աստվածատուրը չի մոռանում ընդգծել Մկրտչի «աստվածահաճո» գործերը, նրա խնամքը և հովանավորությունը հայ ազգաբնակչության նկատմամբ, քանի որ իր ստացածը Նաղաշը օգտագործում էր հայերի և մյուս քրիստոնյաների վիճակը բարելավելու համար։ Սակայն էականն այստեղ այն է, որ վարքագրական հերոսի՝ ժամանակի մշակութային-քաղաքական նշանավոր գործչի՝ Մկրտիչ Նաղաշի դիմագիծն ամբողջանում է ոչ թե սոսկ վարքագրության կարծրացած կաղապարի, այլ պատմական հանգամանքների, հոգեբանական ճշմարիտ իրավիճակների նկարագրության միջոցով։ Նաղաշի վարքագիծը փաստորեն դառնում է պատմական եղելությունների յուրատեսակ արտացոլումը։ Եվ բնական է, որ Աստվածատուրի հիացմունքն ու ոգևորությունը Մկրտչի վարքագծի նկատմամբ, որը իր շատ կողմերով անհամատեղելի է վարքագրական կերպարի ավանդական պատկերացումների հետ, խոսում է մեզ հետաքրքրող ստեղծագործությունների նկարագրի վրա ժամանակի մի շարք ուրույն գործոնների ունեցած ազդեցության մասին։ Ավելացնենք, որ այս երևույթը առավել ցայտուն դրսևորվել է հատկապես հիշատակարանային վարքերում։ Որպեսզի պարզ լինի Մկրտչի կերպարի և վարքագրական ավանդական «իդեալի» միջև եղած տարբերությունը, համեմատենք այն XIII դարի նշանավոր վարդապետ Գևորգ Սկևռացու կերպարի հետ։ Ըստ վարքագրի Գևորգը սիրում էր «յանքոյթ տեղիս լռութեամբ լինել և անխռով յամբոխից մնալ ընդ գազանս ի փապարս լերանց բնակէր և սովով և անպաճոյճ կերակրաւք ճնշէր զինքն և ի մարմնի իբրև զանմարմին երևէր, և ամենայնիւ նուաղեցուցանէր»[26]։ Երբ մահանում է հայ կաթողիկոսը, «թագաւորն իշխանաւքն և եպիսկոպոսաւք, նաև ռամիկքն՝ կանամբք և մանկտւաւք զսուրբս վերաձայնէին արժանի լինել աթոռոյ սրբոյն Գրիգորի։ Զոր նախածան գիտութեամբ իմացեալ

24 Տե՛ս Է. Խոնդկարյան, Մկրտիչ Նաղաշ, Երևան, 1965։

25 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 624։

26 Գևորգ Սկևռացու «Վարքը», հրատ. Է. Բաղդասարյան, «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 418։

սուրբս, այլակերպեաց զինքն և յանկարծելի ուրեք թաքեաւ»[27]։ Կաթողիկոսի ընտրության և օծման օրը Գևորգը «աստուածիմաստ բանիւ և ըստ իրին խաւրհրդոյն պատուեաց զաւրն եւ հայրապետն տայր նմա ձիրս առատս և նա ոչ առ։ Յայնժամ զգեստս, զոր արժան էր առնուլն, ետ նմա և ետ յոլով հարկ առնելոյն և աղաչանաւք հրամայէր առաջի իւր զգենուլ, և սուրբս հակառակէր։ Եւ երկարեալ հայրապետն զաղաչանսն զգեցոյց նմա, և նա այնմ աւուր միայն զգեցաւ և ի մեւս աւրն ետ զգեստն որոց և պատահեաց և ինքն զխաղաղական կեանս ողջունէր և անպսաճոյձ և պատշաճ զգեստուք զմարմին ծածկէր, որպէս և կրաւնաւորաց վայել էր»[28]։

Այսպիսի օրինակները շատ են։

Զգացմունքների արտահայտությունը Աստվածատուրի հերոսի մոտ նույնպես հեռանում է վարքագրական կանոններից։ Ըստ վերջիններիի, սրբության բնորոշ գծերից մեկը արցունքն է, ընդհանրապես սրբի լրջությունը։ Շատ հազվադեպ սուրբը կարող է փրեն թույլ տալ նույնիսկ ժպտալ[29]։ Ուրախության դեպքում էլ նա, որպես կանոն, արտասուք է թափում և օրհնում աստծուն։ Այս տեսակետից մարդկային և բնական է Մկրտչի ուրախությունը։ Երբ նա տեսնում է գմբեթի շինարարության ավարտը, «մեծաւ ուրախութեամբ գոհաբաւ զաստուծոյ, և մոխրաթաւալ երեսաւք աւրհնէր զամենազաւրն աստուած, և ցնծայր և պարէր ի գաւիթս եկեղեցւոյ, որպէս երկնաւոր փեսայ ի մաքուր առագաստին»[30]։

Այդպիսի շեղումը ավանդական կանոններից բացատրվում է, իհարկե, ոչ միայն քննվող վարքի ժանրային յուրահատկությամբ, քանի որ նույն տիպի ավելի վաղ շրջանի վարքերում (Ներսես Լամբրոնացու, Մխիթար Սասնեցու) հանդիպում ենք վարքագրական հերոսի ավանդական կերպավորման, այլ նաև ժամանակով (XV դարի կեսերը), երբ գրականության աշխարհականացումը և իրական աշխարհի ու մարդու արժեքավորումը դառնում էր կենսական անհրաժեշտություն, թափանցելով նաև եկեղեցական գրականության ոլորտը։

Նկարագրվող դեպքերին ականատես և մասնակից լինելու հանգամանքը հեղինակի մոտ ցանկություն է առաջացնում հիշատակել նույն դեպքերի մյուս մասնակիցներին ևս, դրանով իսկ վարքին հաղորդելով նորանոր հատկանիշներ սյուժետային բազմապլանություն, կերպարների առատություն և այլն։

Աստվածատուրը Մկրտիչ Նաղաշի մեծ ծառայությունն է համարում Կաթողիկե եկեղեցու կառուցումը Ամիդում։ Նա մանրամասն նկարագրում է այդ եկեղեցու շինարարությունը, ապա՝ գմբեթի քանդվելը «քրիստոսատեաց» մահմեդականների կողմից և հայերի խոր վիշտը այդ կապակցությամբ։ Բայց ահա «սատակեաց աստուած զայնոսիկ, որք քակեցին զգմբեթն և յարոյց այլ թագաւոր Միջագետաց՝ զՋհանդիր իմիրզայն»[31]։ Նրա խնդրանքով Մկրտիչը վերադառնում է Ամիդ և ի թիվս այլ գործերի, ձեռնարկում նաև մահմեդականների կողմից բանդված գմբեթի վերականգնումը։ «Եւ բնակիչք քաղաքին,—

27 Նույն տեղում, էջ 419։

28 Նույն տեղում, էջ 418։

29 Տե՛ս С. В. Полякова, Византийские легенды, Л., 1972, էջ 265։

30 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 629։

31 Նույն տեղում, էջ 630։

գրում է Աստվածատուրը,— քահանայք և ժողովուրդք, միաբան աւգնական նղեն՝ աշխատելով, դրամ տալով, կերակուր բերելով, մշակ տալով, աղքատք և մեծատունք միամիտ քաջութեամբ և բոլոր հաւատով ջանացին, և ի Ժ(10) աւրն կատարեցին զղուպայն ի շենելոյ... Եւ առաջիկայք ժողովրդեանն և Երեւելի տանուտէրք էին՝ Շահրմանն Թիլկուրանցի, և ոսկերիչ Սատաղէն, որ էր երեսփոխան և հրամանատար, և Ալեքսիանոս ոսկերիչ, և Յերկեն Դանիէլն, Աբրահամն, և Սիմէոն դարբինն, որ ինքեանք տային ինչս բազումս և կերակուրս, և ղամենեսեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին»։ Նույնպիսի ճշգրտություն դիտվում է նաև «Յիշեցեք» մասում։ Այստեղ ևս արտացոլվել է Մկրտչի և Աստվածատուրի ժամանակակիցների կյանքն ու գործը։

Իրենց պարզությամբ, հռետորական հնարանքների զուսպ օգտագործմամբ ընհանրություններ դրսևորելով ժողովրդական ուղղության այլ վարքերի հետ (պարզ-պատմողական, հայսմավուրքային), հիշատակարանային վարքերը տարբերվում են վերջիններից նաև հորինվածքային այլ յուրահատկություններով։ Գեղարվեստական տարրի անժխտելի առկայությամբ հանդերձ, սրանք ավելի մոտ են պատմական գրվածքներին, մինչդեռ առաջինները հակվում են դեպի գեղարվեստական արձակը։

Պարզ-պատմողական վարքերը բուն վարքագրական ստեղծագործություններ են։ Ինչպես և հռետորական վարքերը նրանք ունեն խրատա-ուսուցողական բնույթ և որոշակի նպատակադրում, որի իրականացմանն են ծառայում հրաշապատումները և տեսիլքները (օրինակ, Ստեփաննոս Սյունեցու, Հովհաննես Սարկավագի, Ստեփաննոս Հուսկան որդու վարքերը)։ Այդ պատումների գեղարվեստական ներգործմամբ է, որ հաստատվում է հերոսի սրբության. նրա կատարելության գաղափարը։ Անկախ իրենց զուտ խրատական նպատակադրումից, հրաշապատումները և տեսիլքները գեղարվեստական տեսակետից վարքի ամենահետաքրքիր մասերն էին։ Հետևաբար պետք է ընդունել, որ տեսիլների, հրաշապատումների և գեղարվեստական խոսքին հատուկ հնարների ներմուծումով պարզ-պատմողական վարքերը գաղափարական նպատակասլացության տեսակետից անհամեմատ շահել են։ Նրանցում նպատակադրված հարցադրումները, իմաստային միտումը հրաշապատումների և տեսիլքների միջոցով դարձել են ավելի կոնկրետ, շոշափելի, իսկ բուն վարքերը բանաստեղծական և հուզական նկատելի երանգ են ստացել։

Հիշատակարանային վարքերում շատ հազվադեպ են տեսիլքների և հրաշագործությունների նկարագրությունները, որով և նկատելիորեն թուլանում է այս տիպի վարքերի խրատա-ուսուցողական միտումը և առավել շեշտվում նրանց հարազատությունը պատմական գրվածքներին։

Ամփոփելով մեր խոսքը, ասենք, որ վերոհիշյալ առանձնահատկությունների շնորհիվ վարք-հիշատակարանները իրենց բնույթով բոլորից մոտ են սովորական կենսագրականներին։ Նրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ հայկական վարքերը՝ իբրև պատմականորեն առաջացած գրական-մշակութային երևույթ, տարբեր դարաշրջաններում ձեռք են բերել ժանրային նոր, ինքնահատուկ գծեր, որը հիմք է հանդիսացել վարքերի մեջ նորանոր թեմաների, մոտիվների և գաղափարների ներթափանցման համար։

СРЕДНЕВЕКОВЫЕ АРМЯНСКИЕ ЖИТИЯ -ПАМЯТНЫЕ ЗАПИСИ

К. С. ТЕР-ДАВТЯН

(Резюме)

В XI—XV веках в армянской литературе, наряду с другими видами жизнеописаний, большое распространение получают жития типа памятных записей, обладающие целым рядом особенностей, обусловленных их происхождением и назначением, а также влиянием ряда явлений времени, в частности процесса обмирщения. Характерные черты житий типа памятных записей: сплетение житийной композиции с композицией, свойственной памятным записям, житийной манеры повествования с документально-протокольным ведением рассказа, наличие образа автора, обрисовка образа житийного героя в реальной обстановке быта, сюжетная многоплановость. Важной особенностью является уменьшение роли назидательной стороны жития и выдвижение на первый план правдивого отображения действительности. Главная отличительная черта житий—памятных записей—это близость и непосредственное участие автора во многих описанных в житии событиях, чем обусловлен целый ряд указанных особенностей поэтики этого вида жизнеописаний.

Изучение житий — памятных записей показывает, что армянские жития, как исторически возникший литературно-культурный феномен, приобретали в различные эпохи новые жанровые черты, послужившие основой возникновения в них новых мотивов, идей и пр. Все это привело к тому, что житие, утрачивая свое назидательное назначение и отходя от старых канонов, постепенно превратилось в обычное биографическое повествование.